

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐքԻԱՅՈՒՄ՝ ԲԱՆԱԿ – ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Արրահամ ԳԱՄՊԱՐՅԱՆ

ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոն

Քաղաքական բնականոն կյանքին թուրք զինվորականների ուղղակի և անուղղակի պարբերական միջամտությունները (հողավածում չենք անդրադառնա 1960, 1971, 1980 թվականների ռազմական, 1997 թ. «սպիտակ» և 2007 թ. «էլեկտրոնային») հեղաշրջման պատճառներին և հետևանքներին) մշտապես խանգարել են այդ երկրում լիբերալ ժողովրդավարության (ԼԺ) հաստատմանը կամ կոնսոլիդացիային: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացից զինվորականների չեզոքացումն ու սահմանադրորեն այդ որոշումների վերապահումը քաղաքացիական ինստիտուտներին պարտադիր չէ, որ հանգեցնի ԼԺ կամ կայուն վարչակարգերի ձևավորմանը: ԼԺ կարևոր հատկանիշներից է այն, որ զինվորականները չպետք է խանգարեն քաղաքացիական դերակատարներին՝ ներկայացուցչական ընտրությունների միջոցով ձևավորել կամ ամրապնդել լեգիտիմ քաղաքական, տնտեսական ու սոցիալական ինստիտուտները: Անկախ պարբերաբար անցկացված ներկայացուցչական ընտրություններից, ինչպես նաև քաղաքացիական պաշտոններում զինվորականներին չնշանակելու փաստից՝ Թուրքիայում զինվորականությունը շարունակում է ունենալ ուրույն դերակատարում: Ժողովրդավարական քի-ռի հարաբերությունների հաստատումը չի կարող միայն սահմանափակվել զինվորականների ապաքաղաքականացմամբ, ինչպես փաստում է Հանթինգթոնը¹: Անհրաժեշտ է նաև վերատեսության ենթարկել բանակ-որոշումների ընդունման կենտրոններ ֆորմալ և ոչ ֆորմալ հարաբերությունները²: Թուրքիայում օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը չգործեց խունտաների իշխանության տարիներին, որովհետև զինվորական-

ներն անմիջական մասնակցություն ունեին ինստիտուցիոնալ և սահմանադրական գործընթացներում: Հանրապետական Թուրքիայում բանակի ինստիտուտն էր, որ քաղաքացիական իշխանությունների համար գծեց քաղաքական գործունեության «լեգիտիմ սահմանները»՝ այդպիսով ինքն իր համար ենթահող ստեղծելով «սեփականաշնորհելու» ազգային անվտանգության քաղաքականության (ԱԱՔ) մշակումը և այդ հարցում նվազեցնելով քաղաքացիական իշխանությունների դերակատարումը: Վերոնշյալը կարելի է հիմնավորել Մեթին Հեֆերի փաստարկով³, որ Թուրքիայում ԱԱՔ մշակման ու պահպանման հարցում զինվորականների անվստահությունը կուսակցություններին պայմանավորված է հանգամանքով, որ նրանք թերահավատորեն էին մոտենում քաղաքական դերակատարներին և իրենց գործունեության մեջ վտանգ տեսնում հանրապետական ինստիտուտների գործունեության հարցում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ Թուրքիայում «պետական քաղաքականության»⁴ հարցերում հենց քաղաքական դերակատարների տեսակետների ու մոտեցումների նմանությունը նպաստեց, որ ազգային անվտանգության հայեցակարգի մշակման ու իրագործման հարցերում նվազի քաղաքական ուժերի մասնակցությունն ու դերակատարումը: Փինար Բիլգինը նկատում է, որ բանակն ինքն ստանձնեց ԱԱՔ փաստաթղթի մշակումը և օգտագործելով անվտանգային քաղաքականության շուրջ խոսելու հարցում իր մենաշնորհը՝ ընդլայնեց խուսանավումների հնարավորությունները և լեգիտիմացրեց իր միջամտությունը քաղաքական գործընթացներին⁵: Ամենամեծ գործոնը, որը քի-ռի հարաբերություններում քաղաքական մտադր թեքեց զինվորականների օգտին, այն

¹ Huntington, Samuel. "The Soldier and the State: The Theory and Practice of Civil-Military Relations.", Cambridge, MA: Belknap/Harvard Press, 1957, էջ 8:

² Janowitz, Morris. "The Professional Soldier: A Social and Political Portrait", Glencoe, IL: The Free Press, 1960, էջ 439.

³ Høper, Metin. "State Tradition in Turkey", 1985, The Eothen Press, Northgate, էջ 140.

⁴ St'ü Dogan, Nejat. "Türk Siyasal Partilerinin Uluslararası İlişkilere Yaklaşımı, 1923-1980: Partilerin Benimsedikleri Dışisleri, Güvenlik ve Savunma Politikaları", 2002, Seçkin, Ankara, pp. 117-154.

⁵ St'ü Bilgin, Pinar. "Making Turkey's Transformation Possible: Claiming 'Security-Speak'-not Desecuritization!", South East European and Black Sea Studies, 2007, 7(4), pp. 535-571

էր, որ կուսակցությունների քաղաքական գործունեության համար երկրում չստեղծվեցին այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտային զբաղվել ԱԱԶ մշակմանը՝ սեփական դիրքերից: Կուսակցությունների գործունեության կասեցումը, լուծարումն ու օրենսդրական արգելքները գծեցին «քաղաքականության մշակման» ու դերակատարների սահմանները: Նման պայմաններում բնական էր, որ կուսակցությունները պետք է ակամա չմասնակցեին ԱԱԶ մշակմանը, չհամարձակվեին բանավեճի մեջ մտնել զինվորականների հետ՝ անվտանգային քաղաքականության մշակումն ու իրականացումը թողնելով բանակի ինստիտուտին⁶: Եվ եթե 1980-ականներին Թուրքիայում ազգային անվտանգության քաղաքականության սպառնալիքները գալիս էին հիմնականում ծախակողմյան ուժերից և քեմալիզմը վտանգող գաղափարախոսություններից ու կուսակցություններից, 1990-ականների սկզբին այդ «վտանգներին» միացան ևս երկուսը՝ Քրդստանի բանվորական կուսակցության (ԶԲԿ-ի) արդեն աճող վտանգը և քաղաքական իսլամը⁷: Այս իրողությունը ևս մեկ անգամ ապացուցեց քաղաքական համակարգի միջինստիտուցիոնալ հարաբերություններում բանակի գերակշռող դերը և ԱԱԶ լրամշակման հարցում ամրապնդեց նրա «ինքնավարությունը»: 1990 թ. այդ փաստաթուղթն ստացավ «Պետության կոնցեպցիան և շրջանակը» անվանումը⁸, իսկ ԱԱԽ-ի Գլխավոր քարտուղարությունն այն համարեց «պետության և ազգի գոյատևման, ներքին և արտաքին վտանգներից պետության միասնությանը համարժեք փաստաթուղթ»⁹: Նման արտաքին և ներքին սպառնալիքների հավելումը ազգային անվտանգության քաղաքական օրակարգի վրա նոր հնարավորություններ տվեց բանակին ընդլայնելու գործունեության սահմանները՝ հիմք ընդունելով Զինված ուժերի ներքին ծառայության մասին օրենքի 35-րդ հոդվածը (ընդունվել է 1960 թ. հեղաշրջումից հետո), որը

սահմանում է, որ «Թուրքիայի ՁՈՒ-ի պարտականությունը թուրքական պետության պաշտպանությունն է, իսկ Թուրքիայի Հանրապետության սահմանումը տրված է սահմանադրությամբ: Թուրքիայի ՁՈՒ-ն պատասխանատու է ազգային անվտանգության պահպանման ու ազգային շահերի (նպատակների) իրականացման համար»¹⁰:

Հասարակական շահերի իրականացման գործում էական է նաև հանգամանքը, թե ինչպես են շահերի իրականացման (կամ պահպանման) ինստիտուտները վերաբերվում ժողովրդավարությանը: Տվյալ դեպքում կարևոր է, թե բանակի ինստիտուտն ինչպես է վերաբերվում Թուրքիայում ժողովրդավարության իրականացմանը: Ժողովրդավարությունը զինվորականների համար ավելի շատ եղել է նպատակ, քան միջոց¹¹: Քաղաքական կյանքին իրենց բոլոր ուղղակի կամ անուղղակի միջամտություններից հետո զինվորականները մեղադրել են քաղաքական գործիչներին, այլ ոչ ժողովրդավարությանը՝ որպես կառավարման ոչ արդյունավետ ձև: Այս առումով հետաքրքրական է համեմատել 1960-1997 թթ. զինվորականների չորս միջամտությունները քի-ռի հարաբերությունների տեսանկյունից: 1960-1961, 1971-1973, 1980-1983 թվականներին քի-ռի հարաբերությունները կարելի է բնութագրել որպես «Պահպանողի» մոդել, երբ զինվորականները միջամտում են քաղաքական կյանքին, դուրս մղում քաղաքացիական իշխանություններին իրենց գրասենյակից և վերադառնում գործնասեր: 1997 թ. սպիտակ հեղաշրջումն իրականացվեց առանց զինվորականների իշխանության գալու: Զինվորականներին ընդամենը հաջողվեց, իրենց բնութագրմամբ՝ երկրի աշխարհիկ կարգերին սպառնացող քաղաքացիական իշխանությանը փոխարինել մեկ ուրիշով՝ զերծ պահելով երկիրը ցնցումներից: 1997 թ. հեղաշրջումը քի-ռի հարաբերությունների տեսանկյունից կարելի է բնութագրել որպես «փոխարինման» մոդել, երբ մի իշ-

⁶ Կուսակցությունները հաճախ չէին ցանկանում դիմել քաղաքական ռիսկի՝ ԱԱԶ մշակման հարցի շուրջ թե՛ բանավեճի մեջ մտնելու բանակի ինստիտուտի հետ: Կուսակցապետերը լավ էին հասկանում, որ նման դեպքերում կվտանգվի իրենց քաղաքական կարիերան: Ամենավառ օրինակը 2001 թ. օգոստոսի 4-ին գումարված «Մայր հայրենիք» կուսակցության 7-րդ համագումարն էր, որտեղ կուսակցության նախագահ, փոխվարչապետ Մեսուդ Յըլմազը առաջին փորձը կատարեց հրապարակավ քննարկման առարկա դարձնելու ազգային անվտանգության քաղաքականության փաստաթուղթը: Ազգային անվտանգության քաղաքականության քննարկման (Ulusal Güvenlik Tartmas) մասին Յըլմազի ամբողջական ելույթին կարելի է ծանոթանալ http://www.belgenet.com/2001/yilmaz_040801.html կայքէջում:

⁷ Այս մասին խոսել է նաև Ումիթ Զիզրեն, տե՛ս Cizre, Ümit; "Europeanization and the Role and Attitude of the Turkish Military Toward Europe", 2003, http://www.yale.edu/unsy/Cyprus_Conference_Cize.pdf.

⁸ "Devlet'in Kavram ve Kapsamı" կոչեցյալ փաստաթղթի մասին տե՛ս ԱԱԽ-ի պաշտոնական կայքէջում, <http://www.mgk.gov.tr/Turkce/sss.html>

⁹ İba, Saban, "Milli Güvenlik Devleti: Dünyada ve Türkiye'de Belgeleriyle Milli Güvenlik deolojisi ve Kurumlasma", 1998, Civi Yazıları, İstanbul, էջ 102.

¹⁰ Թուրքիայի Զինված ուժերի ներքին ծառայության մասին օրենքին (Turk Silahlı Kuvvetleri İç Hizmet kanunu) ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ՝ <http://www.hukuki.net/kanun/211.14.text.asp> կայքէջում, կամ Թուրքիայի ՁՈՒ-ի պաշտոնական կայքէջում՝ http://www.tsk.mil.tr/1_TSK_HAKKINDA/1_3_Gorevi/gorevi.htm, 24.01.2009.

¹¹ Heper, Metin. "Civil-Military Relations in Israel and Turkey", 2005, Journal of political and Military Sociology, Vol 33, No.2, 231-248.

խանութիւն փոխարինվում է ուրիշով, որն իր հերթին դժվարութիւններ չի առաջացնում այդ փոխարկումն իրականացրած ուժի կամ ինստիտուտի համար: Փաստորեն՝ բանակը Թուրքիայում իր միջամտութիւնների ընթացքում երբեք չի կիրառել «կառավարողի» մոդելը, այսինքն՝ երկար ժամանակ չի մնացել իշխանութիւնում և առաջնային քաղաքական ինստիտուտների պաշտոններին չի նշանակել զինվորականների: Նրանք, ըստ Յեփերի, մնացել են աշխարհիկ-ժողովրդավարական հանրապետության պահպանները և կառավարման ղեկին նշանակել են արհեստավարժ քաղաքական գործիչների¹²:

Քաղաքական գործընթացներին զինվորականների միջամտութիւնը ժողովրդավարության կոնսոլիդացիայի ամենագլխավոր խոչընդոտներից է: Ժողովրդավարութեանը հավատարիմ լինելը բավարար չէ. անհրաժեշտ է այդ գաղափարախոսութիւնն ինստիտուցիոնալացնել՝ կոնկրետ քաղաքական վարքագծով, ձևավորված խաղի կանոններից չչեղվելով և քաղաքական ինստիտուտների ինքնուրույնութեանն ու տարանջատմանը չխանգարելով: Սահմանադրության ձևավորումը Թուրքիայում մինչև եվրաինտեգրման բանակցութիւնների մեկնարկն իրականացվեց պայմանով, որ այն չխանգարի զինվորականների առաքելութեանը՝ աշխարհիկ-ժողովրդավարական կարգերի պահպանմանը: Այսինքն՝ բանակը ձևավորեց այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորութիւն ընձեռեցին նրան անարգել գործադրել այդ «լեգիտիմ առաքելութիւնը» և քաղաքացիական իշխանութիւններից չհանդիպել այնպիսի դիմադրութեան, որը կհանգեցներ սեփական դերի կրճատմանը: Արդյունքում զինվորականների ձևավորած ինքնիշխանութիւնը սահմանադրորեն անհավասար պայմաններ ստեղծեց քաղաքացիական իշխանութիւնների համար: Տասնամյակների այս քաղաքականութիւնը փոփոխութեան ենթարկվեց ԵՄ բարեփոխումների իրականացման հրամայականի ներքո: Ըստ ԵՄ անդամակցութեան համագործակցութեան 2001 և 2003 թվականների փաստաթղթերի՝ ենթադրվում էր, որ Թուրքիան պետք է իրավական բարեփոխումներ իրականացնի ԱՄՆ-ում զինվորականների նկատմամբ քաղաքացիական դերակատարների տեղն ու դերը բարձրացնելու ուղղությամբ¹³: ԵՄ օրենսդրութեան «պատշաճեցման գործընթացի» շրջանակում ընդունվեցին օրենսդրական փոփոխութիւնների մի շարք փաթեթներ, որոնց ժիրում պետք է կարգավորվեին նաև քի-ռի հարաբերութիւնները:

Այդ շրջանակում ԱՄՆ-ում քաղաքացիական ներկայացուցիչների թիվն ավելացվեց՝ հավասարվելով զինվորականների թվին: Առաջին անգամ ԱՄՆ-ի Գլխավոր քարտուղար նշանակվեց քաղաքացիական պաշտոնյա, ԱՄՆ-ի նիստերի ժամանակային պարբերականութիւնը նույնպես կրճատվեց՝ այդուհետ խորհուրդն իր նիստերը գումարում էր երկու ամիսը մեկ՝ նախկին մեկ ամսվա փոխարեն, ԱՄՆ-ը դարձավ խորհրդակցական մարմին, որի որոշումները պարտադիր չեն կառավարութեան համար¹⁴: Հակառակ ակնկալվող արձագանքին և ԱՄՔ հարցերում ապամեծաշնորհային օրենսդրական հիմքի ձևավորմանը՝ զինվորականները հիմնականում չվիճարկեցին առաջարկված փոփոխութիւնները: Կարծում ենք, որ հիմնական պատճառը զինվորականների ավանդական՝ արևմտամետ և արդիականամետ օրինմտացիան էր, որը տասնամյակներ շարունակ եղել և մնացել է նույնը: Բանակը խնամքով է փայփայում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցութեան հեռանկարը: Եվ հենց պարզվեց, որ եվրաինտեգրման գործընթացը շարունակելու համատեքստում անհրաժեշտ է որոշ էական փոփոխութիւններ կատարել ԱՄՆ-ի կազմում, զինվորականները ոչ բացահայտորեն, սակայն որոշ վերապահումներով համաձայնեցին քաղաքացիական դերակատարների կշռի բարձրացմանը ԱՄՆ-ում¹⁵: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի կազմում կատարված այս էական փոփոխութիւնները, որոնք ուղղված էին Թուրքիայում ԱՄՔ մշակման վերածակերպմանը, կարելի է համարել կառուցվածքային և ֆունկցիոնալ, այլ ոչ իրական քաղաքականութեան համատեքստում: Կարելի է փաստել, որ ժողովրդավարացման արտաքին գործունը՝ ի դեմս ԵՄ-ի, կարևոր, ոչ արդյունավետ դերակատարում ունեցավ Թուրքիայում քի-ռի հարաբերութիւնների որոշակիացման գործում գոնե օրենսդրական առումով: Այդ ալիքը նպաստեց, որ անվտանգային քաղաքականութեան առումով Թուրքիայում բանավեճ ծավալվի քաղաքական գործընթացների երկու գլխավոր դերակատարների միջև: Սահմանվորապես՝ Հայաստանի հետ հարաբերութիւնների կարգավորման և քրդական հարցում Թուրքիայում իշխող «Արդարութիւն և զարգացում» կուսակցութեան նախաձեռնութիւնները (անկախ դրանց արդյունքներից) վկայում են, որ քաղաքացիական իշխանութիւններին հաջողվեց փոքր-ինչ մասնակցութիւն ունենալ և չհանդիպել լուրջ խոչընդոտների: Թեև պետք է խոստովանել, որ 2009 թ. քրդական հարցում վարչապետ Ռե-

¹² Նույն տեղում, էջ 242:

¹³ Տե՛ս Թուրքիայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի զեկույցները 2001, 2003 թվականներին:

¹⁴ Տե՛ս http://belgenet.com/yasa/ab_uyum7-1.html

¹⁵ Karawan, Ibrahim, "Security Sector Reform and Retrenchment in the Middle East", 2003, Challenges of Security Sector Governance, DCAF, Geneva, էջ 263.

ջեփ Էրդողանի առաջարկած «ճանապարհային քարտեզ»-ը հանդիպեց ընդդիմադիրների խիստ քննադատությանը¹⁶: Իսկ գինվորականությունն ի դեմս Գլխավոր շտաբի պետ Իլթեր Բաշբուրդի հայտարարեց, որ բանակն աջակցում է կառավարության ջանքերին, սակայն միաժամանակ հիշատակեց այն «կարմիր գիծը», որը չի կարելի անցնել քրդական հարցում: «Բոլորը պետք է հասկանան, որ Թուրքիա-

յի Սահմանադրության 3-րդ հոդվածը, որն անփոփոխելի է, սահմանում է, որ երկրի տարածքային ամբողջականությունը, միասնականությունն ու ժողովրդի ինքնիշխանությունն անքակտելի են»¹⁷: Սույն օրինակը փաստում է, որ Թուրքիայում քի-ռի հարաբերություններն ավելի շատ ենթարկվում են իրական քաղաքականության տրամաբանությանը:

SPECIAL FEATURES OF NATIONAL SECURITY DISCOURSE IN TURKEY IN THE CONTEXT OF CIVIL-MILITARY RELATIONS

ABRAHAM GASPARYAN

Summary

Civil-military relations in Turkey have been an everlasting debate since the foundation of the republic in 1923. In order to maintain political order and protect these institutions the military found it necessary to intervene five times in 1960, 1971, 1980, 1997 and 2007. This article looking at the period between 1997 and 2007 and analyzing the civil-military dynamics in Turkey in the context of National Security policy making process and in the framework of EU integration process. Furthermore, in terms of the roles and missions of the military in Turkey, the article discussing the problems of "civilianization" of army institution, the specific features of National Security discourse in that country as an obstacle on the road of consolidating democracy.

ОСОБЕННОСТИ ПРОЦЕССА РАЗРАБОТКИ ПОЛИТИКИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ В ТУРЦИИ В СВЕТЕ ОТНОШЕНИЙ АРМИЯ – ВЛАСТЬ

АБРААМ ГАСПАРЯН

Резюме

В Турции, с момента основания республики в 1923 году, отношения армия-власть были темой дискуссии. В целях поддержания политического порядка и защиты военных учреждений силовые структуры сочли необходимым вмешаться в политические процессы 5 раз: в 1960, 1971, 1980, 1997 и 2007 годах. Эта статья охватывает период между 1997 и 2007 годов и анализ динамики отношений армия-власть в контексте дискурса политики национальной безопасности, в рамках процесса интеграции в ЕС. Кроме того, с точки зрения роли и задач турецких вооруженных сил, в статье освещается проблема деполитизации армии. В статье также обсуждаются особенности дискурса национальной безопасности в этой стране, как препятствие на пути консолидации демократии.

¹⁶ Sbu <http://www.hurriyetdailynews.com/h.php?news=opposition-critical-to-gov8217t8217s-road-map-offering-its-own-measures-2009-11-13>.

¹⁷ Sbu <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=military-outlines-its-red-lines-on-kurdish-move-2009-08-25>.